Հ Ր Ա Մ Ա Ն N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«24» ՀՈՒՆՎԱՐԻ 2017 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի հունվարի 19-ի N 01/13/1/135-17 գրությունը և Ա. Գալստյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-5) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Արմեն Էդվարդի Գալստյանի հետ 2017 թվականի հունվարի 24-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ